


Նկ. 4. Մշտական ճեղքով ուղիղ տեսության գրապանի սպեկտրոսկոպ:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կոնվերտերների ավտոմատացումը Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատին թույլ տվեց 1957 թվականին բարձրացնել աշխատանքի էֆեկտիվությունը կոնվերտերային մշակման գծով (հալումների ծանրացումը՝ 5—6 % -ով, նրանց տևողության կրճատումը՝ 7—8 % -ով, աշխատաշրջանի ավելացումը՝ մինչև 5—6 ամսով) և ծծմբաթմվային ցեխի գծով (ծծմբային անհիգրիդի կոնցենտրացիայի բարձրացումը մինչև 6—8 %, սիւնեմի մեջ օդի ներթափառնցման պակասսեցումը և մելանժի, էլեկտրաէներգիայի ու տարրական ծծմբի ծախսի իջեցումը, ցեխի արտադրողականության բարձրացումը՝ 15 %), ծծմբական թթվի ինքնարժեքի իջեցումը՝ 75 ոտքը լով, ինչպես նաև թթվացնել աշխատանքի պայմանները և պակասսեցնել ցեխում գազերի կոտակումը:



Նկ. 5.  $\text{SO}_2$ -ի պարունակությունը կոնվերտերային գազերում, հալումների վերջում:  
1. Հալում № 363, 2. Հալում № 362, 3. Հալում № 364,  
4. Հալում № 366, 5. Հալում № 368, 6. Հալում № 369:

2. Կոնվերտերային պրակտիկայում արմատավորվել է սպիտակ մատուի պատրաստովթյան վերահսկման նոր եղանակը, որը հիմնված է գորպանի սպեկտրոսկոպի օգնությամբ կոնվերտերի բոցի սպեկտրի դիտման վրա:

Մշակվել է սև պղնձի պատրաստության վերահսկման եղանակը, որը հիմնված է ստիլոս-կոպի օգնությամբ կոնվերտերների գազերի սպեկտրի դիտման վրա:

## Նոր տեխնիկա և պրոգրեսիվ տեխնոլոգիա

### ԼԱՐՄԱՆ ՍՏԱԲԻԼԻԶԱՑՈՐՆԵՐ ԿԻՍԱՀԱՂՈՐԴԱՑԻՒՆ ՍԱՐՔԵՐՈՒՄ ԵՎ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՌԻՖԵԼՈՐԱՐՆԵՐՈՒՄ

Ժ. ՄԿՐՏՉՅԱՆ, Պ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԵՎ Կ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ


Ցածր և բարձր լարումը կայունացնելիս, երբ անում են գգալի հոսանք սպառող (միավոր և տասնամյուր ամպերներով արտահայտված) բեռ-

նավորում, էլեկտրոնային կարունացման սովորական սիստեմաներն անդադար են, քանի որ այդպիսի սպառման դիմացում մեծ թվով ավելանում

է գուգահեռ միացված էլեկտրոնային լամպերի և կիսահաղորդչային սարքերի քանակությունը։ Այդ ձևով պատրաստված սարքերը դառնում են մեծածավալ, տնտեսապես ոչ ձեռնուր և անհուսավիր:

Նշված թերությունները վերացնելու համար փոփոխական հոսանքի 2 դիմայում լարման կարգվորումը կարելի է իրականացնել մագնիսավանուժերարների օգնությամբ, որոնք կառավարվում են մատքնիսավան կամ էլեկտրոնային ուժեղաբարերություն:

Կոմպենսացիոն տիպի այդպիսի ստաբիլիզատորի կմախքային սխեման բերված է 1-ին նկարում։ Խնշպես սխեմայից երևում է, ուժեղացնող օրգանի մուտքի մոտ ստացվում է  $E_{\text{ext}}$  էտարղությին լարման տարրերությունը և  $\Delta U_{\text{ext}}$  ելքի լարման մի մասը, որը, ներդրենելով գործադրի օրգանի վրա, համակշռում է ելքի լարման փոփոխությունը:



Նկ. 1.

1. Գործադրի օրգան, 2. Բաժանիչ արանքորմանը,
3. Համարդիչ և ֆիլտր, 4. Թեռնավորում, 5. Ուժեղացնությին օրգան, 6. Զանիչ օրգան, 7. Լարման էտարղը:

Ստաբիլիզատորի սկզբունքային սխեման բերված է 2-րդ նկարում։ Ելքի լարման կայունացումը իրականացվում է ավտոտրանսֆորմատորի ( $U_{\text{S}}$ ) առաջազգին լարման գոտիությամբ՝ մագնիսական ուժեղաբարերի ( $U_{\text{R}}$ ) օգնությամբ, որն իր հերթին, կառավարվում է  $\Phi_{\text{ext}}$  տրիոդի կուբկտորային հոսանքով։ Ուժեղացնող օրգանը կազմված է կասկադային ձևով միացրած  $\Phi_{\text{ext}}$ ,  $\Phi_{\text{R}}$  և  $\Phi_{\text{ext}}$  տրիոդներից։

Կոմպենսացիոն տիպի ստաբիլիզատորի սխեմն իրենից ներկայացնում է ավտոմատիկ կարգվորման ստատիկ սխեմ, որն ընդգրկում է մեկ տատանողական և երեք իներցիոն էլեմենտներ։

Ուժեղացման բակավան մեծ գործակցի դեպքում կարելի է գրել

$$U_{\text{ext}} \approx \frac{1}{a} E_{\text{ext}} \quad (1)$$

որտեղ  $U_{\text{ext}}$ -ը և  $E_{\text{ext}}$ -ը համապատասխանողներն ելքի և էտարղներին լարումներն են, իսկ  $a$ -ն՝ լարման բաժանարարը ( $a \leq 1$ )։

Խնշպես երևում է (1) արտահայտությունից, ելքի լարումը կախված չէ բեռնալորման, ելքի լարման, զերմաստիճանի և այլ մեծություններից, այն պայմանով, եթե  $a$  և  $E_{\text{ext}}$  արժեքները հաստատվուն են։

Խնշպես հայտնի է, էտարղներին լարման հարաբերական սխեմանքը ստաբիլիզատորի հարաբերական սխեմանքի մեջ, իսկ համարդիչ կապի ուժեղաբարերի ( $\Phi_{\text{ext}}$ ) առաջին կապակառի ուժեղաբարերի սխեմանքը մտնում է ստաբիլիզատորի ընդհանուր սխեմանքի մեջ՝ փոքրացրած  $\Delta U_{\text{ext}}$  անդամ։

Որպես էտարղնային լարում կիրառվել է ԿԴ-1 սիլիցիումային դիտոդ՝ Զեների էֆեկտով։ Զոր մարտկոցների և մարմրող պարպիման լամպերի համեմատությամբ նա տևի հետեւյալ առավելությունները՝ ծառայության մեջ ժամկետ, փոքր գարարիտներ և բարձր մեխանիկական ամրություն։


ԿԴ-1 դիտոդն ունի դրական զերմաստիճանային գործակից, որը համակշռովում է ԿԴ-1 հետաղարձ դիտոդի բացթղողման ուղղությամբ ներկու դիտոդների հաջորդական միացմամբ, քանի որ ուղիղ ուղղությամբ դիտոդն ունի բացասական զերմաստիճանային գործակից։ Էտարղնային լարման սնումը մուտքի կողմից նույնպես կայունացվում է ֆերոռեզոնանսային ստաբիլիզատորի օվկուլյարմբ։

Ստաբիլիզատորի տեխնիկական ավալները:

1.  $U_{\text{ext}}$  լարումը  $U_{\text{ext}} = 220$  Վ
2. Ցանցի հաճախականությունը  $f_g = 500$  Բց
3. Ցանցի լարման փոփոխությունը  $\Delta U = -10 + 50\%$
4. Կարողությունը ելքի մոտ  $P = 225$  Վ
5. Ելքի լարումը  $U_{\text{ext}} = -15$  Վ
6. Բեռնավորման հոսանքը  $I_g = 15$  Ա
7. Բեռնավորման փոփոխությունը  $70\%$
8. Ստաբիլիզատորի ճշտությունը  $\pm 0,5\%$
9. Գաբարիտային չափերը  $250 \times 200 \times 150$  մմ

Կիսահաղորդչային սարքի միջոցով կառավարվող մագնիսական ուժեղաբարով լարման ստարիլիզատորը կոմպակտ է և տնտեսապես

ձեռնտու ցածր և բարձր լարման այն տեղակայումների համար, որոնք գգալի էլեկտրաէներգիա են սպառում:



Նկ. 2. Ստարիլիզատորի սկզբունքային սխեման:

## ԹՐԹՈՒՄԱՆ, ՀԵՂՈՒԿԻ ՃՆՇՄԱՆ ԵՎ ՎԱԿՈՒՈՒՄԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԶԱՓՈՒՄՆԵՐԸ.

ՅՈՒ. ԽՈՉԱՄԻՐՅԱՆ

ԽԵԺԵԵՐ

Ջանազան կառուցումների, էներգետիկ սարքավորման, մեխանիզմների և այլնի շահագործման պրակտիկայում՝ հաճախ անհրաժեշտ է լինում շափել ամեն տեսակի ուշ էլեկտրական մեծություններ, օրինակ՝ թրթուման ամպլիտուդան և հաճախականությունը, հեղուկի ճնշումը, վակուումը, նյութերի մեխանիկական լարումը, ջերմաստիճանը և այլն; Անցողիկ պրոցեսների հետազո-

տությունների ժամանակ, հաճախ նույնակես ժապաված է նշված մեծությունների օգիլոգրաֆիկ գրանցման անհրաժեշտությունը: Այդ ոչ էլեկտրական մեծությունների առավել բավարար շափումը և գրանցումը կարող է կատարվել էլեկտրական եղանակներով:

Հայկական ՍՍՌ ժողովական գործությունների էներգետիկ վարչության սիստեմում, շահագործման և ար-